ԻՆՉԻՑ ՍԿՍԵԼ ԶԻՆՎՈՐԱՅՈՂՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ՇՓՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ռազմական օպերացիաների գոտում մարտական գործողությունները ցույց են տալիս, թե որքան է փոխվել ժամանակակից համազորային մարտի բնույթը: Հետախուզական և հարվածային անօդաչու թռչող սարքերի, բարձր ճշգրտության հրետանու, արհեստական բանականության զանգվածային կիրառումը, այս ամենը հրամանատարներից և թիկունքային ծառայության սպաներից պահանջում են զգալի ճշգրտումներ մտցնել հակառակորդի հետ շփման գծի մոտ գտնվող ստորաբաժանումների կահավորման և կենցաղի կազմակերպման գործում:

Լինի դա մարտարշավ, որի կարևորագույն տարրերը լարված բազմակիլոմետրանոց երթերն են և գրավյալ տարածքների հաճախակի փոփոխությունը, թե ակտիվ պաշտպանություն, ամեն դեպքում, վաղ թե ուշ անհրաժեշտ է լինելու հանգստի, մարտունակության վերականգնման շրջանների ստեղծումը:

Ստորաբաժանումներում ռազմական կառավարման մարմինների կողմից իրականացվող անձնակազմի տեղաբաշխման վայրում բնակության և կենսապայմանների մի շարք ստուգումների վերլուծությունները ցույց են տվել, որ ոչ բոլոր պաշտոնատար անձինք, հատկապես գումարտակային օղակում, բավականին ամբողջական աշխատանք են կատարում դաշտային պայմաններում զինծառայողների կենսապայմանների կազմակերպման ուղղությամբ:

Հաշվի առնելով մարտական փորձը ինչպե՞ս պետք է կազմակերպել զինվորների առօրյան՝ թշնամու հետ անմիջական պայմաններում: Ինչպե՞ս պետք է ամեն ինչ կահավորել, հաշվի առնենելով ամեն բան և ոչինչ չմոռանալ:

Նախնառաջ, սահմանենք գումարտակի պաշտպանության շրջանի վաշտի (դասակի) հենակետի հիմնական օբյեկտները: Մեկ վաշտի համար պետք է լինի ճաշարան (սնվելու վայր), ճաշամանները լվանալու տեղեր, լվացարաններ, զուգարաններ, աղբահորեր, ինչպես նաև դաշտային լոգարան՝ մեկական յուրաքանչյուր վաշտի համար: Բլինդաժներ անձնակազմի տեղավորման համար, ընդ որում, դրանք պետք է լինեն անհրաժեշտ քանակով ՝ հաշվի առնելով կուտակումների կանխումը:

Այսպիսով: Գումարտակի պաշտպանության գոտում, յուրաքանչյուր վաշտի (դասակի) հենակետում, կազմակերպվում է սննդի ընդունման վայր, որը կառուցված է հաշվի առնելով տեղանքի պաշտպանիչ հատկությունները և ունի բավարար քողարկվածություն: Այս վայրը, ըստ էության, ճաշասենյակը կահավորվում է բլինդաժներում (ապաստարաններում) այնպիսի հաշվարկով, որպեսզի 10-15 զինծառայողներ միաժամանակ կարողանան սնվել, և միացված լինեն հաղորդակցության անցուղիներով (խրամուղիներով):

Ճաշասենյակի հատակները և պատերը պատված են հավաքովի փայտե վահաններով կամ տախտակով: Սալերը կամ գերանները դրվում են վերևում: Հակառակորդի կողմից օդային դիտումից քողարկումը պարտադիր է: Իմպրովիզացված նյութերից պատրաստվում են սեղաններ, որոնք պատված են պոլիէթիլենային թաղանթով: Ջեռուցման համար այստեղ տեղադրվում է երկաթե տակդիրով վառարան: Մոտակայքում տեղադրվում է կրակմարիչ և (կամ) ավազով արկղ: *Կարևոր հիշեցում.* վառարանի ծխատար խողովակը պետք է դուրս բերվի սննդի ընդունման վայրից առնվազն 3 մետր հեռավորության վրա: Այսպես է պահանջում քողարկման կանոնները: Չէ որ հակառակորդը կարող է ծուխ նկատել հետախուզական ԱԹՍ – ից:

Սննդի ընդունման վայր

Բացի այդ, շինությունում պետք է լինի դարակներով պահարան՝ պահեստատուփերի և զենք պահելու համար: Ճաշասենյակ մտնելիս թերմոսներից պատրաստում են այսպես կոչված տաք սննդի թողարկման անկյուն: Այստեղ տեղադրվում է սեղան, որը պատված է պոլիէթիլենային թաղանթով: Պատի հետևի մասում ամրացվում են կեռիկներ, որոնց վրա կարելի է կախել տաք սնունդ բաժանողների համար նախատեսված հատուկ հագուստի իրեր:

Տաք սննդի թողարկման վայրում պետք կահավորված լինի է փայտով և թաղանթով պատված դարակներ, որոնց վրա տեղադրվելու և պահվելու է սնունդը: Մուտքի մոտ անպայման տեղադրվում է փայտե տրապ՝ կոշիկները կեղտից (ցեխ, ձյուն) մաքրելու համար:

Մեկ այլ կարևոր կետ է կաթսաների, գավաթների և գդալների լվացման տեղը, որը պետք է կահավորված լինի յուրաքանչյուր դասակի հենակետում: Իհարկե, այն գտնվում է ապաստարանում և սննդի ընդունման վայրի հետ կապված է լինելու հաղորդկցության անցուղիով (խրամուղիով): Ինչպես ճաշասենյակի դեպքում, հատակը և պատերը պատված են փայտե վահաններով, տախտակներով: Կաթսաները ուղղակիորեն լվանալու համար սովորաբար տեղադրվում են ՕՄ-12 կամ դաշտային եռոց (ՊՀԿ-2) տիպի սարքավորումներ, որոնք ունեն խողովակների և ծորակների մի ամբողջ համակարգ ' ջուր մատակարարելու համար: Եթե այդպիսի սարքավորումները մատչելի չեն, ապա տեղադրվում են սովորական վառարան և ինքնաշեն լվացարան՝ ջուրը տաքացնելու և սպասքը լվանալու համար: Վառարանը, կրկնում ենք, գտնվում է երկաթե տակդիրի վրա, իսկ մոտակայքում պետք է լինի կրակմարիչ (ավազով արկղ):

Սննդի թափոնների համար անհրաժեշտ է կափարիչով բաք, իսկ մուտքի աջ կողմում կախված պետք է լինի սպասքի լվացման միջոցների պահեստավորման և պահպանման արկղ: Կեղտաջրերի հավաքման համար սարքավորվում են սեպտիկներ (ներծծող հորեր), որոնք ծածկվում են կիպ փակող կափարիչներով:

Դաշտային բանակային լվացարան

Յուրաքանչյուր դասակի հենակետի ապաստարանում կահավորվում է լվացարան: Դրա սարքավորման պահանջները նույնն են, ինչ նախկինում նշվել է: Անձնակազմի տեղաշարժման համար հաղորդակցման անցուցիներ (խրամուղիներ), որոնք միացած են բլինդաժներին: Հատակը և պատերը փայտապատում են, ջուրը տաքացնելու համար տեղադրվում է վառարան, իհարկե, երկաթե տակդիրի վրա, կրակմարիչով (ավազե արկղով): Ի թիվս այլ բաների, կան տաք և սառը ջրի տարաներ, ջուր լցնելու դույլեր և, ըստ էության, լվացարաններ՝ 5-7 մարդու համար: Մուտքի աջ կողմում կախված է օճառի պահեստավորման արկղը:

Ինչ վերաբերում է կեղտաջրերին, այն հավաքելու համար պետք է սարքավորել սեպտիկ տարաներ (ներծծող հորեր), որոնք պետք է փակված լինեն կափարիչով: Լվացարանի մուտքի մոտ տեղադրվում է փայտե տրապ՝ կոշիկները կեղտից (ցեխ, ձյուն) մաքրելու համար:

Այժմ մի քանի խոսք անձնակազմի տեղաբաշխման համար բլինդաժների կահավորման մասին: Համարենք, որ կրկնությունը գիտությունների մայրն է, և, հետևաբար, ևս մեկ անգամ հիշեցնենք, որ բլինդաժները հենակետի հիմնական տարրերին պետք է միացված լինեն հաղորդկցման անցուղիներով (խրամուղիներով), որ հատակները և պատերը պետք է պատված լինեն գերաններով, հավաքովի փայտե վահաններով կամ տախտակով, և որ վերևում տեղադրված լինեն սալեր կամ գերաններ, որոնք անպայման պետք է քողարկվեն հակառակորդի օդային դիտարկումից:

Բլինդաժի բնակելի մասում տեղադրվում է ջեռուցման վառարանը՝ ծխատար խողովակի պարտադիր դուրսբերմամբ, ինչպես ճաշասենյակի դեպքում՝ առնվազն 3 մետր հեռավորությամբ: Վառարանը, կրկնում ենք, գտնվում է երկաթե տակդիրի վրա, իսկ մոտակայքում պետք է լինի կրակմարիչ (ավազով արկղ): Պարտադիր է նաև պահեստային ելքի կառուցումը: Պատճառը պարզ է. տագնապի պարագայում, կամ որևէ արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում ստորաբաժանման անձնակազմը միշտ պետք է հնարավորություն ունենա արագ, առանց հրմշտոցի, լքել տարածքը և անմիջապես մտնել մարտի:



Բլինդաժի կահավորում

Բլինդաժի մուտքի հակառակ ծայրում անհրաժեշտ է բացել օդափոխության անցք, որի վրա սարքավորել քողարկող տուփ:

Զինծառայողների հանգստի համար, հատակից առնվազն 50 սմ բարձրության վրա, տախտակներից կամ ձողաններից սարքավորվում և տեղադրվում են տախտամածներ, ինչպես նաև սեղան և նստարաններ: Թեյի պարագաները, շաքարը պահելու համար կահավորվում են դարակներով խորշեր, որի համար, որպես կանոն, պետք է օգտագործել ձեռքի տակ գտնվող նյութերը և պոլիէթիլենային թաղանթ:

Բացի այդ, տեղադրվում են արտաքին հագուստի կախիչներ, կոշիկի դարակներ, սարքավորվում է զենքի պահման տարածքներ՝ պահեստատուփերի դարակներով: Մուտքի մոտ անհրաժեշտ է տեղադրել փայտե տրապ՝ կոշիկները կեղտից (ցեխ, ձյուն) մաքրելու համար:

Հաջորդ կետը դաշտային բաղնիքն է, որը նախատեսվում է սարքավորել յուրաքանչյուր վաշտում: Դրա համար պատրաստվում է հատուկ բլինդաժ (ապաստան) կամ օգտագործվում է վրանային տիպի պատրաստի տարբերակը, եթե կարող եք ձեռքբերել: Բացի այն, որ բաղնիքը, նույնպես, պետք է ունենա հաղորդկցման անցուղիներ (խրամուղիներ), հատակները և պատերը պետք է պատված լինեն փայտից, և վառարանը, անշուշտ, պետք է տեղադրված լինի երկաթե տակդիրի վրա կրակմարիչի (ավազով արկղի) հարևանությամբ: Ի տարբերություն այլ սենյակների, այստեղ, արդյունավետ օդափոխություն ապահովելու նպատակով, տեղադրվում են օդամատակարարման և ածխածնի երկօքսիդի օդաքաշման առնվազն երկու խողովակներ:

Դաշտային բաղնիք

Կարևոր է հաշվի առնել, որ օդամատակարարման խողովակը գտնվում է բաղնիքի անկյուններից մեկում, իսկ ստորին ծայրը հատակից 50-60 սմ հեռավորության վրա է: Անկյունագծով հակառակ անկյունում օդաքաշման խողովակն է :

Լանջին փորված բաղնիք-բլինդաժների համար կարող եք պատուհան պատրաստել: Դե, իհարկե, գետնի մակերևույթից վեր գտնվող բոլոր խողովակների

ելքերը պետք է քողարկել, ի դեպ, այդ թվում՝ հակառակորդի ինֆրակարմիր և ջերմատեսիլ սարքավորումներից:

Ի՞նչ պետք է լինի բաղնիքի ներսում: Այստեղ անհրաժեշտ է նախատեսել լոգանքի և շոգեհարման սենյակների կահավորում: Եթե բաղնիքի ներքին տարածքի ծավալը բավականաչափ մեծ չէ, այդ խցիկները կարող են միավորվել: Ամեն դեպքում, լոգանքի մասում պետք է ապահովել կեղտաջրերի հեռացումը: Դա անելու համար հատակների տակ փորվում են ջրահեռացման ակոսներ, որոնք միանում են ջրահեռացման փոսերին: Անմիջապես լոգարանում տեղադրվում են սառը և տաք ջրի տարաներ, ինչպես նաև դարակներ, որոնց վրա կարող եք տեղադրել լոգանքի միջոցներ, ճիվիլներ (мочалка), բաղնիքի թասեր և դույլեր:

Եթե էլեկտրական սարքեր են տրամադրվում, ապա դրանք պետք է ջրամեկուսացվեն: Դա անվտանգության խնդիր է: Կարևոր է նաև կահավորել մի վայր, որտեղ զինծառայողները լեգանքից առաջ (հետո) կարող են հանվել (հագնվել), այնտեղ նստարաններ դնել և ապահովել հագուստի համար կախիչներով: Մուտքի մոտ տեղադրվում է փայտե տրապ՝ կոշիկները կեղտից (ցեխ, ձյուն) մաքրելու համար:

Եվ, վերջապես, յուրաքանչյուր դասակի գտնվելու վայրում անհրաժեշտ է կահավորել զուգարան, որը, կրկին, հաղորդակցման անցուղիներով (խրամուղիներով) միացված են բլինդաժներին: Որոնք են զինծառայողների կենսաապահովման այս, իսկապես, կարևոր օբյեկտի կահավորման հիմնական պահանջները դաշտային պայմաններում:

Լվացարաններից և սննդի վայրերից մինչև արտաքնոց հեռավորությունը պետք է լինի առնվազն 40-100 մ: Շինությունն ինքնին բաժանված է վերգետնյա մասի և արտաքնոցի հորի: Վերգետնյա մասը պատրաստվում է մեկ նստատեղի հշվարկով 10-12 մարդու համար և հավաքված է հարթ մակերեսով ամուր տեղադրված նյութերից: Դրանք կարող են լինել տախտակներ, աղյուսներ և այլն: Կարևոր է շինությունը պաշտպանել միջատների և կրծողների ներթափանցումից: Ինչ վերաբերում է արտաքնոցի հորին, ապա այն կիպ փակվում է կափարիչով և պետք է լինի անջրանցիկ: Դրա խորությունը կախված է ստորգետնյա ջրերի մակարդակից, բայց չպետք է խորանալ ավելի քան 3 մ: Պարբերաբար ախտահանումը պարտադիր է, և հորի լցվածությունը չի կարող գերազանցել հողի մակարդակից 0,35 մ ցածր գտնվող նշանը:

Յուրաքանչյուր դասակի գտնվելու վայրում փորվում է թափոնների համար հորեր: Այն բաղկացած է հորից և վերգետնյա մասից՝ կափարիչով և ցանցով՝ պինդ թափոնները հավաքելու համար:

Կարևոր նշում: Ստորաբաժանումների հենակետերի և պաշտպանական շրջանների կառուցման համար նախատեսված նյութերը, այսինքն՝ ինժեներական սարքավորումների տարրերը, կլոր փայտանյութը, փայտե տախտակները, սալերը, կեռիկները, մեխերը, մետաղալարերը և այլն, մատակարարվում են կենտրոնացված կերպով և ընդունվում են բեռնաթափման կայաններում: Այս ամբողջ իրերը ստորաբաժանումների տրանսպորտով մատակարարվում է ժամանակավոր տեղակայման կետեր:

Այսպիսով, վաշտի (դասակի) հենակետերի և գումարտակի պաշտպանական շրջանի կենսական նշանակության օբյեկտների շինարարության, պահպանման և աշխատանքի կազմակերպման կառավարումն ու վերահսկողությունը կազմում են բոլոր կարգի հրամանատարների և պետերի աշխատանքի ամենակարևոր մասը: Ի վերջո, հակառակորդի հետ անմիջական շփման մեջ գտնվող առաջնագծում գործող

ստորաբաժանումների զինծառայողների համար լավ կենսապայմանները նրանց մարտական խնդիրների հաջող կատարման ամենակարևոր գործոններից մեկն է:

Աղբյուրը: https://dzen.ru/b/Zyn6AyoQmx6L9LB4?ysclid=mdsmazj6sm160315972